

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄ-ՄԱԾՁԲ-26/38**

ք. Աշտարակ

«29» Մայիս 2026 թ.

«ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը», ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հրայր Գևորգյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարգիս Մկրտչյան» ԱԶ-ն, ի դեմս տնօրեն Ս.Մկրտչյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ու սահմանված ռեսուրսները,

2.4.6 պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և

պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 710 140 (յոթ հարյուր տաս հազար հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V = U \cdot K / 100$, որտեղ՝

V-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

U-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

K-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:²⁰

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը

¹⁸ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

¹⁹ Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

²⁰ Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հասգամանքը:²²

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

²² Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 32 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ

Ք. Աշտարակ Վարդգես Պետրոսյան 4

ՀՀ ՖՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հ/հ 900441041176

ՀՎՀՀ 05031479

գլխավոր քարտուղար Վ. Գևորգյան

/ստորագրություն/



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Սարգիս Մկրտչյան» ԱԶ

Ք.Աշտարակ, Տիգրան Մեծի 107

Հայէկոնոմբանկ ՓԲԸ

Հ/հ՝ 163208009056

ՀՎՀՀ՝ 54644005

Տնօրեն՝ Ս.Մկրտչյան

(ստորագրություն) Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

* Ծառայության						
	անվանումը	չ/մ	քանակը	մատուցման տեխնիկական բնութագիրը	Առավելագույն գումարը /ՀՀդրամ/	մատուցման ընդհանուր ժամկետները
1	Ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ CPV50111130/501	դրամ	1	Տես աղյուսակ 2	Ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված առավելագույն գումարն է 710 140 ՀՀ դրամ	Պահանջը ներկայացվելու օրվանից հաշված Մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 15.12.2026թ.։ Առանձին դեպքերում պատվիրատուի կողմից կարող են լսահամակցվել ծառայության մատուցման այլ ժամկետներ:

Աղյուսակ 2

h/h	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիակա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)		
		1	2	
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	Volvo EX40 Էլեկտրական	Տոյոտայենդ cruiser prado 2,7լ 2006	Ռենո լոզան 1,4լ 2015
1	Բռնկման համակարգի ստուգում	1500	1500	1500
2	Կցորդման համակարգի ստուգում	1500	1500	1500
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1500	1500	1500
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1500	1500	1500
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1500	1500	1500
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները			
	1.Շարժիչ			
6	Շարժիչի հանում և տեղադրում		25000	25000
7	Շարժիչի քանդում և արատավորում և հավաքում		10000	10000
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները		75000	75000
9	Շարժիչի գլխիկի հանում և տեղադրում միջադիրի փոխարինումով		7500	7500
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով		5000	5000
11	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ		1000	1000
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում		2500	2500
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում		750	750
14	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ		1000	1000
15	Ջրիչների կամ հիդրոհորիչների փոխարինում 1 կ-տ		3500	3500

16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում		3500	3500
17	Ծնկածն լիսեռիիղկում		4000	4000
18	Ծնկածն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում		2500	2500
19	Ծնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ		5000	5000
20	Ծնկածն լիսեռիատամնանիվիփոխարինում		5000	5000
21	Ծնկածն լիսեռիուղղում		0	0
22	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում		2500	2500
23	Ծնկածն լիսեռիհետևիխցուկի փոխարինում		5000	5000
24	Շարժիչիբլանկիփոխարինում		10000	10000
25	Շարժիչիզանիփոխարինում (гилзобка)		7500	7500
26	Մխոցի փոխարինում 1 հատ		5000	5000
27	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում		7500	7500
28	Բաշխիչ լիսեռիակնոցներիհանումևտեղադրումկամփոխարինում		5000	5000
29	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում		1500	1500
30	Փոկանիվի փոխարինում		7500	7500
31	Շարժիչիատամնավորփոկիփոխարինում		5000	5000
32	Շարժիչի շղթայի փոխարինում		5000	5000
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)		4000	4000
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով		2500	2500
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում		1500	1500
36	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով		1500	1500
37	Շարժիչի յուղիմղիչի փոխարինում		2500	2500
38	Շարժիչի յուղիմղիչինորոգում, մաքրում		2500	2500
39	Շարժիչի յուղիմղիչի մաքրում		2500	2500
40	Յուղի ծորակի փոխարինում		2000	2000
41	Օդաքաշակ փողրակի փոխարինում		1500	1500
42	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում		2500	2500
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում		2500	2500
44	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում		2500	2500
45	Շարժիչի կափույրի փոխարինում		2500	2500
46	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում		2500	2500
47	Շարժիչի շարժաթևիփոխարինում 1 հատ		2500	2500
48	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ		2500	2500
49	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում		2500	2500
50	Ատամնանիվի փոխարինում		2500	2500
51	Ատամնանիվի փոկի փոխարինում		2500	2500
52	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում		5000	5000

53	Սուխարիկ փոխարինում 1կ/տ		1500	1500
54	Շարժիչի հանդարտիչի փոխարինում		5000	5000
55	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում		1500	1500
56	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում		1500	1500
57	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով		5000	5000
58	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում		2500	2500
59	Շարժիչի փոկի ծոցի փոխարինում		2500	2500
60	Շարժիչի փոկի ծոցի նորոգում		2500	2500
61	Շարժիչի գամասեղի փոխարինում		2500	2500
62	Շարժիչի գամասեղի փոխարինում բմիկի նորոգումով		5000	5000
63	Գլխիկի հեղույսի փոխարինում		5000	5000
64	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում		5000	5000
65	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում		2500	2500
66	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում		2500	2500
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		0	0	0
67	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	250	250	250
68	Ավտոմեքենայի յուղում	1000	1000	1000
69	Համակարգչային ախտորոշում, թերութունների վերացմանը	2500	2500	2500
70	Յուղի ռադիատորի փոխարինում	2500	2500	2500
71	Յուղի ռադիատորի նորոգում	4000	4000	4000
72	Շարժիչի կոլեկտորի փոխարինում		2500	2500
73	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում		2500	2500
74	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ		500	500
75	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում		5000	5000
76	Օդի գտիչի փոխարինում		250	250
77	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում		1500	1500
78	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում		1500	1500
79	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում	0	0	0
80	Կարբյուրատորի վերանորոգում	0	0	0
81	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում		7500	7500
82	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում		10000	10000
83	Բոցամուղի կողավորում		1500	1500
84	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում		1500	1500
85	Բենզամուղիչի փոխարինում		5000	5000
86	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում		2500	2500
87	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում		5000	5000
88	Բռնկման կարգավորում		1500	1500
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում		1500	1500
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում		5000	5000

91	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում		10000	10000
92	Վառելիքի բաքի մաքրում		5000	5000
93	Օդի ծախսի տվիչի փոխարինում		1500	1500
94	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում		0	0
95	Տրամյորի վերանորոգում		0	0
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում		1500	1500
97	Ջրիխտողվակի, փողլակի փոխարինում		2500	2500
98	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում		5000	5000
99	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում		2500	2500
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում		1500	1500
101	Տվիչի փոխարինում		1500	1500
3. Սառեցման և արտածման համակարգ		0	0	
102	Հովհարի փոխարինում	2500	2500	2500
103	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
104	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
105	Ռադիատորի նորոգում	15000	15000	15000
106	Շերտափեղկի փոխարինում	5000	5000	5000
107	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	5000	5000	5000
108	Ընդարձակող բաքի փոխարինում	2500	2500	2500
109	Ընդարձակող բաքի փողլակի փոխարինում	2500	2500	2500
110	Ջրի ծորակի փոխարինում	2500	2500	2500
111	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	2500	2500	2500
112	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
113	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	12500	10000	10000
114	Վառարանի ռադիատորի նորոգում	5000	5000	5000
115	Վառարանի շարժիչի փոխարինում	5000	5000	5000
116	Թերմոստատի փոխարինում		2500	2500
117	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով		5000	5000
118	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում		2500	2500
119	Գեներատորի փոկի փոխարինում	1500	1500	1500
120	Գեներատորի փոկի ձգող հղովակի փոխարինում	2500	2500	2500
121	Ջրի ռադիատորի վերանորոգում		15000	15000
122	Թերմոստատի միջադիրի փոխարինում		2500	2500
123	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում		2500	2500
124	Խլարարի 1 հատիտողվակի փոխարինում		2500	2500
125	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում		2500	2500
126	Խլարարի ներդիրի փոխարինում		2500	2500
127	Խլարարի կախոցի փոխարինում		2500	2500
128	Հովացման հեղուկի փոխարինում		2500	2500
4. Կցորդում և ՓՏ		0	0	

129	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
130	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	25000	25000	25000
131	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	2500	2500	2500
132	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
133	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
134	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
135	Կցորդման երկժանի փոխարինում	2500	2500	2500
136	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	75000	75000	75000
137	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	5000	5000	5000
138	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	5000	5000	5000
139	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	5000	5000	5000
140	ՓՏ-ի հանում և տեղադրում	5000	5000	5000
141	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	5000	5000	5000
142	ՓՏ-ի պատյանի փոխարինում	5000	5000	5000
143	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
144	ՓՏ-ի միջանկյալ խսեռի փոխարինում	5000	5000	5000
145	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	5000	5000	5000
146	ՓՏ-ի առաջնային խսեռի փոխարինում	5000	5000	5000
147	ՓՏ-ի երկրորդային խսեռի փոխարինում	5000	5000	5000
148	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	5000	5000	5000
149	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	5000	5000	5000
150	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	5000	5000	5000
151	ՓՏ-ի յուղի փոխարինում	5000	5000	5000
152	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	5000	5000	5000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		0	0	
153	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	25000	25000	25000
154	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
155	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	5000	5000	5000
156	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5000	5000	5000
157	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5000	5000	5000
158	Բաշխիչ տուփի դիֆրագման երի փոխարինում	5000	5000	5000
159	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	5000	5000	5000
160	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	5000	5000	5000
161	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	5000	5000	5000

162	Բաշխիչ տուփի երկժամիի փոխարինում	5000	5000	5000
163	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	5000	5000	5000
164	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	5000	5000	5000
165	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
166	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	2500	2500
167	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	0	7500	7500
168	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
169	Տվիչի փոխարինում	5000	5000	5000
170	Բաշխիչ լիսեռի ատամնամիվի փոխարինում	5000	5000	5000
171	Կարդանային լիսեռիմիջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
6. Առջևի և հետևի կամրջակներ		0	0	
172	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	17500	17500
173	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	10000	10000	10000
174	Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000
175	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	5000	5000	5000
176	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	5000	5000	5000
177	Կամրջակի յուղի փոխարինում	1500	1500	1500
178	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
179	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	15000	15000	15000
180	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	7500	7500
181	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	0	2500	2500
182	Հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
183	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	2500	2500	2500
184	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	2500	2500	2500
185	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
186	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	2500	2500	2500
187	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	2500	2500	2500
188	Կամրջակի տվիչի փոխարինում	2500	2500	2500
7. Կախոց		0	0	

189	Տրավերսի հանուն և տեղադրում կամ փոխարինում	7500	5000	5000
190	Ձախ կամ աջ հողակապի հանուն և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
191	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2500	2500	2500
192	Առջևի անվակունդի հանուն և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
193	Հետևի անվակունդի հանուն և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
194	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2500	2500	2500
195	Անվակունդի գամասեղի և հեղույսի փոխարինում(մեկ անիվի համար)	2500	2500	2500
196	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	2500	2500	2500
197	Ցնցամեղմիջի թասակի փոխարինում	2500	2500	2500
198	Առջևի զսպանակի փոխարինում	2500	2500	2500
199	Առջևի ցնցամեղմիջի հանուն և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
200	Հարվածամեղմիջի վռանների փոխարինում	2500	2500	2500
201	Ներքևի լծակի հանուն և տեղադրում կամ փոխարինում	2500	2500	2500
202	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	2500	2500	2500
203	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	2500	2500	2500
204	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	2500	2500	2500
